ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1954 Общественные науки

Աբ. Մարուխյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ

Այս տարվա հունվար ամսին լրացավ Ուկրաինան Ռուսաստանին վերամիավորվելու 300-ամյակը։

Ուկրաինական ժողովուրդը դարեր շարունակ հերոսական, ազատագրական պայքար մղելով օտար նվաճողների՝ ֆեոդալական Լեհաստանի, գերմանական «շուն ասպետների» և այլ կեղեքիչների դեմ, պատվով կատարեց իր պատմական, ազգային-ազատագրական միսիան։

Ռուսական, ուկրաինական և բելոռուսական ժողովուրդների ազգային ծագման ու պատմական բախտի ընդհանրությունը, դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակ, կոփեց նրանց մեջ ձգտում դեպի ազգային վերամիավորումն ու ռուսական միասնական պետության ստեղծումը։

Կիևյան Ռուսիան իր ժամանակին Արևմտյան Եվրոպայի առաջավոր ու հզոր պետություններից մեկն էր։ Նա իր նյութական ու հոգևոր կուլտուրայի համեմատաբար բարձր մակարդակով բարենպաստ ազդեցություն էր գործում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Եվրոպայի շատ պետությունների վրա։ Ունենալով քաղաքական, տնտեսական ու կուլտուրական լայն կապեր՝ միջազգային հարաբերությունների մեջ գրավում էր առաջավոր ու երբեմն էլ թելադրող դիրք։

Կիևյան Ռուսիան մեծ դեր է կատարել թե՛ Ռուսաստանի և թե՛ Արևմտյան Եվրոպայի արտադրողական ուժերի, նրանց տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման գործում։ Հենց այն հանգամանքը, որ Կիևյան իշխանությունը XIII դարում իր ռազմա-քաղաքական ու տնտեսական հզորությամբ ու ազգային բարոյական միասնությամբ կարողացավ կանգնեցնել թաթարա-մոնղոլական բարբարոսների ավերիչ արշավանքը դեպի Եվրոպա, ցույց է տալիս, որ «Եթե Ռուսիան չկատարեր իր այդ անօրինակ հերոսությունը, ապա շատ հավանական է, որ թաթարական հեծելազորը կտրորեր Փարիզի և Հռոմի փողոցները և ամբողջ Եվրոպայի կուլտուրական առաջընթացը հետ կշպրտվեր»[1]։ Այդպիսով, Կիևյան Ռուսիան ծանր կորուստների գնով փրկեց Եվրոպան. «Ռուս ժողովրդի այդ մեծ հերոսությունը վարձատրվեց Ռուսաստանի հսկայական ավերման գնով, նրա արտադրողական ուժերի ոչնչացումով, գյուղերի ու քաղաքների այրումով և ռուս արհեստավորներին գերի քշելով»[2]։

Ուկրաինական ժողովուրդը մեծ ու սարսափելի տառապանքներ կրեց հատկապես լեհական պանների տիրապետության ժամանակ։

Լեհական պանները երկար ժամանակ տիրելով ուկրաինական հողերի մեծ մասին, անասելի հալածանքի ու շահագործման էին ենթարկում աշխատավոր ժողովրդին։ Օտար նվաճողները, ուկրաինական ֆեոդալների հետ միասին, ամեն կերպ աշխատում էին ասիմիլյացիայի ենթարկել ուկրաինական ազգը։

[1] История культуры Древней Руси, том II, изд. 1951, Москва, стр. 530.
[2] Նույն տեղում։

Նրանք աշխատում էին բռնի կերպով դավանափոխ անել ուկրաինացիներին, զրկում ազգային լեզվով խոսելու, գրելու իրավունքից, ոչնչացնում էին նրանց ազգային կուլտուրան, ինքնուրույնությունն ու ամեն կերպ արգելակում ազատության համար պայքարող սլավոնական ժողովուրդների՝ հատկապես ռուս մեծ ժողովրդի հետ սերտ կապեր ստեղծելու և վերամիավորվելու գործին։

Ուկրաինական ժողովուրդը լեհական պանների, լիտվական կնյազների, հունգարական բարոնների, թյուրքական փաշաների ու մյուս բոլոր տեսակի թշնամիների դեմ՝ իր ազատության ու ազգային ինքնուրույնության համար մղած պայքարում միշտ էլ հենվել է ռուս մեծ ժողովրդի հզորության ու անշահախնդիր օգնության վրա։

Ռուս մեծ ժողովրդի ցույց տված ռազմա-քաղաքական ու տնտեսական օգնությունն ինչպես Ռուսաստանի տերիտորիայի վրա ապրող ժողովուրդներին, այնպես էլ հարևան ժողովուրդներին ավելի նշանակալի դարձավ հատկապես XVI դարի սկզբներին, երբ ստեղծվեց ռուսական կենտրոնացված հզոր պետությունը։

Ռուսական կենտրոնացված պետության ռազմա-քաղաքական հզորության աննախընթաց աճը բարձրացրեց նրա միջազգային հեղինակությունը, հաստատակամությունը և վճռական նշանակություն ունեցավ ռուս, ուկրաինացի և բելոռուս ժողովուրդների վերամիավորման, և ընդհանուր թշնամու դեմ միասնական ու վճռական պայքար մղելու գործում։

Այս բոլորը է՛լ ավելի մեծացրին սլավոնական, հատկապես ռուս և ուկրաինական ժողովուրդների վերամիավորման ռազմական, քաղաքական ու տնտեսական նշանակությունը։

Ուկրաինական ժողովուրդը, նրա առաջավոր դավակները, վերջնականապես համոզվեցին, որ միայն ռուս մեծ ժողովրդի հետ վերամիավորվելու միջոցով, նրա անմիջական օգնությամբ հնարավոր կլինի ապահովել երկիրը օտար դավթիչների հարձակումներից և միայն ռուս մեծ ժողովրդի հետ միասին կարելի կլինի զարգացնել ու պահպանել ազգային լեզուն, կուլտուրան, առաջ մղել երկրի տնտեսական կյանքը։

Ուկրաինական ժողովրդի՝ Ռուսաստանի հետ վերամիավորվելու դարավոր իղձը, նրա առաջավոր մարդկանց անձնուրաց պայքարը հաղթանակով ավարտվեց, երբ 1654 թվականի հունվարի 8-ին Պերեյասլավի Ռադան որոշում ընդունեց Ուկրաինան Ռուսաստանին վերամիավորելու մասին։

Ուկրաինական ժողովուրդը խելացիորեն իր պատմական բախտը կապելով Ռուսաստանի, նրա բազմազգ ժողովուրդների հետ, թևակոխեց քաղաքական, տնտեսական ու կուլտուրական վերելքի մի շրջան։ Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ ուկրաինական ժողովրդի, նրա նյութական ու կուլտուրական կյանքի հետագա կազմակերպման ու զարգացման համար։

Երկու մեծ ժողովուրդների վերամիավորումն ուժեղացրեց նրանց համատեղ պայքարը օտար նվաճողների դեմ, ցարական դեսպոտիզմի դեմ, միջնադարից եկած հետամնացության ու խավարի դեմ։

Ռուս և ուկրաինական ժողովուրդների միասնական՝ ռուսական հզոր պետության ստեղծումը, արմատապես փոխեց Ռուսաստանի դերն ու հեղինակությունը միջազգային հարաբերությունների բնագավառում, Ռուսաստանը դար-

ձավ միջազգային հարաբերությունների մեջ իր վճռական ազդեցությունն ունեցող մի հզոր պետություն։

Վերամիավորումից հետո Ուկրաինայում զգալիորեն աշխուժացավ տնտեսական կյանքը։ Սկզբնական շրջանում հատկապես զարգացավ արհեստագործությունն ու առևտուրը։ Ուկրաինան աստիճանաբար ներգրավվեց համառուսական առևտրի մեջ։ Ուկրաինայից Ռուսաստան էր արտահանվում արհեստագործական արտադրանք հանդիսացող տարբեր տեսակի իրեր, գյուղատնտեսական մթերքներ ու նյութեր՝ կենդանի անասուն, յուղ, բուրդ, կաշի, ոգելից խմիչքներ, վուշի գործվածքներ, թելեր, դեղորայք և այլն։

Ռուսաստանից ներմուծվում և ուկրաինական շուկաներում իրացվում էր մեծ քանակությամբ մետաղյա իրեր՝ մանգաղ, դանակ, սուր, ասեղ, մորթի և այլ իրեր։

Հետագայում երկրի տնտեսական կյանքն է՛լ ավելի է աշխուժանում, երբ ուկրաինական ազգային կապիտալի առաջացմանն ու զարգացմանը զուգահեռ մեծ մասշտաբով Ուկրաինա է ներթափանցում ռուսական առևտրա-արդյունաբերական կապիտալը, որի հետևանքով, հատկապես նրա հարավում, արագորեն խարխլվում են հին ճորտատիրական, ֆեոդալական տնտեսության հիմքերն ու արագ կերպով զարգանում կապիտալիստական հարաբերությունները։

Ռուսաստանի տնտեսական կապերի զարգացումը արտաքին շուկաների հետ, երկրի ներքին տնտեսական զարգացման արագ ընթացքը անհրաժեշտություն են դարձնում Ուկրաինայի ներքին՝ բնական հարստությունների հայտնաբերումն ու շահագործումը։

Թե՛ ռուսական արդյունաբերողները և թե՛ նոր զարգացող ազգային կապիտալը XIX դարի առաջին կեսերին հատուկ հետաքրքրություն ու շահագրգռվածություն են ցուցաբերում դեպի Դոնբասի ածխահանքերը, Կրիվոյոռոգի երկաթահանքերը և այլն։

XIX դարի 40—60-ական թվականները հանդիսանում են Ուկրաինայի բնական հարստությունների հետախուզման և հայտնաբերման, կապիտալի կուտակման ու արդյունաբերական կապիտալի զարգացման նախադրյալների ստեղծման շրջան։ Ուկրաինայի արդյունաբերության զարգացման բնագավառում արմատական բեկում է սկսվում XIX դարի 60—70-ական թվականներին։

Այդ մեծ բեկումը հիմնականում հետևանք էր ինչպես ազգային, այնպես էլ ռուսական արդյունաբերական կապիտալի զարգացման ու ներքին շուկայի պահանջի ընդարձակմանը, հատկապես երկաթուղային տրանսպորտի զարգացման, որը մեծ պահանջ է առաջացնում քարածխի ու երկաթահանքի արտադրության ավելացման համար։

Հետագայում երկաթուղային տրանսպորտի զարգացումն ուժեղացրեց Ուկրաինայի տնտեսական կապերը Ռուսաստանի հյուսիսային մարզերի արդյունաբերական շրջանների հետ ու շահագրգռող մեծ դեր խաղաց հատկապես քարածխի ու երկաթահանքի արտադրության արագ զարգացման համար։

Դոնբասի ածխարդյունաբերության արագ զարգացմանը մեծ չափով նպաստում է նաև 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմը, որի հետևանքով Ռուսաստանը որոշ ժամանակ զրկվեց անգլիական ածխի ներմուծումից։

Դոնբասի ածխարդյունաբերությունն առավել արագ զարգացավ XIX դարի վերջին տասնամյակներում։

Այսպես, եթե Դոնբասում 1870 թվականին արտադրվել էր ընդամենը 327 հազար տոննա քարածուխ, ապա 1900 թվականին արտադրվեց 11 327 հազար տոննա քարածուխ, այլ կերպ ասած՝ երեսուն տարվա ընթացքում քարածխի արտադրանքը միայն Դոնբասում ավելացավ մոտ 35 անգամ, այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում Ռուսաստանում ածխարդյունաբերության ընդհանուր արտադրանքը աճել էր 16 անգամ, Ամերիկայում՝ 6 անգամ, իսկ Անգլիայում՝ ածխարդյունաբերության այդ հին երկրում՝ 2 անգամ։ Երկաթահանքի արտադրանքը Ռուսաստանի հարավում 1870 թվականի 40 հազար տոննայից բարձրացավ 6400 հազար տոննայի։

Քարածխի և երկաթահանքի համառուսական ընդհանուր արտադրության մեջ Դոնբասին վերաբերող այդ թվերը ներկայացնում են հետևյալ պատկերը. եթե Դոնբասը 1870-ական թվականներին տվել էր երկրի քարածխի արտադրանքի 43,1 տոկոսը, ապա 1913 թվականին տվեց 87,0 տոկոսը. երկաթահանքի արտադրանքի տեսակարար կշիռը նույն ժամանակամիջոցում 4,5 տոկոսից բարձրացավ մինչև 73,0 տոկոսի։

Այս բոլորի հետևանքով Դոնբասը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին դարձավ նախառևոլյուցիոն Ռուսաստանի ածխարդյունաբերության և մետալուրգիական հումքի արտադրության հիմնական բազան։

Երկրի արտադրողական ուժերի զարգացման, մասնավորապես արդյունաբերության զարգացման հետևանքով առաջացավ ու կազմավորվեց ուկրաինական բանվոր դասակարգը, որը ռուսական բանվոր դասակարգի հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, կանգնեց մարդկությունը կապիտալիստական շահագործումից, ստրկությունից ազատագրելու պայքարի ուղու վրա։

Ուկրաինական բուրժուական նացիոնալիստները, տեսնելով այդ միասնական մեծ ուժի անպարտելիությունը, ամեն կերպ աշխատում էին ազգային երկպառակություն սերմանել ժողովրդի մեջ. սակայն ուկրաինական աշխատավորությունը և առաջավոր ինտելիգենցիան իրենց լավագույն ապագան իրավացիորեն տեսնում էին միայն և միայն այդ ազգային միասնության, առաջին հերթին ռուս և ուկրաինական բանվորների միասնության մեջ. ուկրաինական առաջավոր ժողովուրդը, նրա մարտական բանվոր դասակարգը ամենայն խորությամբ ըմբռնեց ու անշեղորեն ղեկավարվեց մեծ Լենինի այն ցուցումով, թե «Վելիկոռուս և ուկրաինացի բանվորների միասնական գործունեությամբ հնարավոր է ազատ Ուկրաինա, առանց այդպիսի միասնության նրա մասին խոսք անգամ չի կարող լինել»[1]։

Երկու մեծ ժողովուրդների երկարամյա պայքարը օտար նվաճողների և ցարական դեսպոտիզմի դեմ, ազգային բուրժուազիայի ու կալվածատիրության դեմ, հաղթանակով ավարտվեց, երբ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի օրերին ռուսական, ուկրաինական, բելոռուսական պրոլետարիատը՝ Ռուսաստանում ապրող մյուս բոլոր ազգերի պրոլետարիատի հետ միասին, Կոմունիստական պարտիայի կոչով ու մարտական ղեկավարությամբ, տապալեց ցարական կարգերը Ռուսաստանում և երկրում հաստատեց Սովետական իշխանություն։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը արմատապես փոխեց ոչ միայն երկու մեծ ժողովուրդների պատմական բախտի ըն-

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 20 (4-րդ հրատ.), էջ 19։

թացքը, այլև Ռուսաստանում ապրող մյուս ժողովուրդների պատմական զարգացման ընթացքը։

Սովետական կարգերի հաստատման հետևանքով, ինչպես մեր մեծ Հայրենիքի բոլոր ժողովուրդները, այնպես էլ ուկրաինական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ, արագորեն վերացրեց ցարական կարգերից ժառանգած տնտեսական, կուլտուրական հետամնացությունն ու փաստական անհավասարությունը և բռնեց տնտեսական ու կուլտուրական զարգացման պայծառ ուղին։

Սովետական իշխանության տարիներին, Ուկրաինական ռեսպուբլիկան, իր հզոր ինդուստրիայով, մեքենայացված գյուղատնտեսությամբ և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական առաջավոր կուլտուրայով իր արժանի տեղը բռնեց սովետական ժողովուրդների բազմազգ ընտանիքում։

Հայտնի է, որ Ուկրաինան 1918—1920 թվականներին անգլո-ամերիկյան իմպերիալիստների կողմից կազմակերպված ինտերվենցիայի ժամանակ, ինչպես և ռևոլյուցիայի ներքին թշնամիների դեմ մղված քաղաքացիական պատերազմների տարիներին, տնտեսական խորը քայքայման ենթարկվեց ու մեծ կորուստներ կրեց։ Բավական է հիշել, որ քաղաքացիական պատերազմի ավարտման վերջին օրերին Դոնբասի ածխահանքերի զգալի մասը՝ ավելի քան 600 հանքախորշ լցված էր ջրով կամ ավերված էր, որի հետևանքով ածխարդյունաբերության արտադրանքը 1920 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, 7—8 տոկոսի էր հասել։ Ավելի ծանր վիճակումն էր մետալուրգիական արդյունաբերությունը։ 1913 թվականին գործող 57 գոմենյան վառարաններից 1920 թվականին գործում էր մեկ վառարան. մետալուրգիայի ընդհանուր արտադրանքը նույն ժամանակամիջոցում իջավ մինչև 5 տոկոսի։ Քայքայված էր նաև երկաթուղային տրանսպորտը, որը համարյա չէր գործում։ Էլեկտրակայանների ու ֆաբրիկա-գործարանների մեծ մասը չէր աշխատում։ Երկրում տիրում էր նյութական ծանր վիճակ։

Մեծ չափերի հասնող անկում ու ավերում տեղի ունեցավ նաև գյուղատնտեսության բնագավառում։ Կրճատվեցին ցանքատարածությունները, ընկավ բերքատվությունը, որի հետևանքով խիստ պակասեց գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքը։ Այսպես, օրինակ, 1920 թվականին՝ 1913 թվականի համեմատությամբ հացահատիկների արտադրանքը պակասեց 2,3 անգամ։ Խիստ կրճատվեց անասունների գլխաքանակը, պակասեց անասնամթերքների արտադրանքը։

Այս բոլորը տեղի տվեց սովի ու համաճարակների, որոնք զգալի վնաս հասցրին ուկրաինական ժողովրդին։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն հատուկ քննության առավ Ուկրաինայում տիրող դրությունը և մի շարք միջոցառումներ ձեռնարկեց ռեսպուբլիկան տնտեսական այդ ծանր վիճակից արագորեն դուրս բերելու համար։

1920 թվականին Ուկրաինական Կոմունիստական պարտիայի Կենտկոմի քարտուղար ընտրվեց Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ականավոր գործիչ՝ Վ. Մ. Մոլոտովը։

Հսկայական աշխատանք ծավալվեց Ուկրաինայում՝ ժողովրդական տնտեսության վերականգնման բնագավառում։ Ժողովրդական տնտեսության վերականգնման 5—6 տարիների ընթացքում ուկրաինական ժողովուրդը, շնորհիվ սոցիալիստական պետության ամենաեռանդուն ջանքերի, շնորհիվ Սովետական

Միության, հատկապես Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի նյութական ու բարոյական օգնության, մեծ հաջողությունների հասավ։ Հիմնականում վերականգնվեցին ցանքատարածությունները, աճեց անասունների գլխաքանակը, գյուղատնտեսության համախառն ու ապրանքային արտադրանքը։ 1923/24 թվականներից սկսվեցին գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով գյուղատնտեսական արտադրական պրոցեսների մեքենայացման առաջին քայլերը։ Այդ տարիներին ուկրաինական գյուղատնտեսության մեջ արդեն աշխատում էր 433 տրակտոր, իսկ մեկ տարի հետո՝ 1924/25 թվականներին՝ 3190 տրակտոր։

Գյուղատնտեսության վերականգնմանը զուգընթաց՝ արագորեն վերականգնվում էր նաև արդյունաբերությունը։ Հատուկ ուշադրություն էր դարձվում ածխարդյունաբերության ու մետալուրգիական ձեռնարկությունների վերականգնման ու աշխատատար պրոցեսների մեքենայացման վրա։ 1923/24 թվականներին արտադրվեց ավելի քան 11 միլիոն տոննա քարածուխ, գործարկվեց ավելի քան 25 դոմենյան վառարան, հիմնովին վերականգնվեցին ու տեխնիկապես վերակառուցվեցին Դնեպրոպետրովսկի, Կամենսկի, Ստալինոյի (Յուզովկայի) մետալուրգիական ու մեքենաշինական խոշոր ձեռնարկությունները։

Կառուցվեցին ու գործարկման հանձնվեցին գյուղատնտեսական գործիքների, քիմիական, սննդի արդյունաբերության՝ հատկապես շաքարի արտադրության մի շարք նոր գործարաններ։

Արդյունաբերության էներգետիկ բազան ամրապնդելու ու հարստացնելու համար 1925 թվականից սկսվում է Խարկովի, Կիևի, Զուգուևի էլեկտրակայանների շինարարությունը, իսկ 1927 թվականից սկսվում է Լենինի անվան, Եվրոպայում ամենամեծ հիդրոէլեկտրակայանի կառուցումը Դնեպր գետի վրա։

Սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, ինչպես Սովետական Միության մյուս բոլոր ռեսպուբլիկաները, նույնպես և Ուկրաինական ռեսպուբլիկան, դարձավ հզոր, բազմահարուստ ինդուստրիալ ռեսպուբլիկա։

Ուկրաինայում ստեղծվեց առաջավոր տեխնիկայով հագեցված գունավոր մետաղամշակության, մեքենաշինության, բազմատեսակ քիմիական նյութերի, գյուղատնտեսական մի շարք մեքենաների, հատկապես տրակտորաշինության հզոր արդյունաբերություն։

Սովետական Ուկրաինան դարձավ քարածխի, մետաղի, առաջավոր մեքենաշինության, սննդի ու քիմիական արդյունաբերության ռեսպուբլիկա։

Սոցիալիստական ինդուստրացման տարիներին Ուկրաինայում ստեղծվեցին ու գործի դրվեցին ծանր մեքենաշինության այնպիսի հսկա ձեռնարկություններ, ինչպիսիք են՝ «Ազովստալ», «Զապարոժստալ» մետալուրգիական կոմբինատները, Կրեմատորսկի մետալուրգիական-մեքենաշինական գործարանները, Խարկովի շոգեքարշերի, էլեկտրամեքենաշինության ու տրակտորի գործարանները, Դորլովկայի քիմիական գործարանը և այլ շատ գործարաններ, որոնք իրենց տեխնիկական սարքավորմամբ և արտադրանքի որակով ու ծավալով Եվրոպայում հավասարը չունեն։

Ռեսպուբլիկայի ինդուստրացման տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց էներգետիկ բազայի վերակառուցման ու զարգացման վրա։ 1932 թվականին գործարկվեց Դնեպրի՝ Լենինի անվան հիդրոէլեկտրակայանը։ Ձեռնարկվեց մի շարք մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը։ Հաջողու-

թյամբ է ընթանում վերջին տարիների ընթացքում սկսված Կախովկայի խոշոր հիդրոէլեկտրակայանի կառուցումը։

Հիմնովին վերակառուցվեցին ու տեխնիկապես վերազինվեցին Դոնբասի ածխահանքերի ամբողջ սիստեմը, Կրիվոյոռոգի երկաթահանքերը, որտեղ հանույթի աշխատանքները ներկայումս մեքենայացված են և օրեցօր ավելի կատարելագործվում են։

Դոնբասի ու Կրիվոյոռոգի հանքախորշերում կատարվող աշխատանքը իրավամբ կարելի է համարել աշխարհի ամենակատարելագործված, լայն մեքենայացված ու ամենաբարձր արտադրողականություն ունեցող հանքահանման աշխատանքը աշխարհում։

Սոցիալիստական ինդուստրացումն արմատապես փոխեց Սովետական Ուկրաինայի տնտեսական դեմքը, բարձրացրեց նրա տեղը Սովետական Միության ընդհանուր տնտեսական կյանքում։

Սովետական Ուկրաինայի սոցիալիստական արդյունաբերության համախառն արտադրանքը ներկայումս 1913 թվականի համեմատությամբ աճել է 11 անգամ, խոշոր արդյունաբերության արտադրանքը նույն թվականի համեմատությամբ՝ 17 անգամ, մետաղամշակության արտադրանքը՝ 69 անգամ, քարածխի արտադրանքը՝ ավելի քան 4 անգամ, չուգունի ձուլումը՝ 4,5 անգամ, իսկ պողպատի արտադրանքը՝ մոտ 5 անգամ։

Սովետական Ուկրաինան գերմանա-ֆաշիստական հորդաների արշավանքի հետևանքով մեծ կորուստներ կրեց։ Հիտլերյան բարբարոսները ոչնչացրին ուկրաինական քաղաքներն ու գյուղերը, ֆաբրիկաներն ու գործարանները, ջրովլցրին կամ պայթեցրին հարյուրավոր հանքախորշեր, քայքայեցին երկաթուղային տրանսպորտը, թալանեցին ու ավերեցին հազարավոր կոլտնտեսություններ, մեքենա-տրակտորային կայաններ ու սովխոզներ։

Գերմանա-ֆաշիստական բարբարոսներն ավելի քան 285 միլիարդ ռուբլու վնաս հասցրին Սովետական Ուկրաինայի ժողովրդական տնտեսությանը։

Ուկրաինական հերոսական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, սովետական բազմազգ ժողովրդի, հատկապես ռուս մեծ ժողովրդի անմիջական օգնությամբ, կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կարողացավ վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, այլև ստեղծեց ավելի լավ ու տեխնիկապես ավելի առաջավոր սարքավորումներով հագեցված ֆաբրիկաներ, գործարաններ, էլեկտրակայաններ, հանքախորշեր, գյուղատնտեսական ձեռնարկություններ, ընդարձակեց երկաթուղային ու խճուղային տրանսպորտը և այլն։

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, որ Սովետական Ուկրաինան դեռևս 1950 թվականին հասավ ու անցավ արդյունաբերության արտադրանքի իր նախապատերազմյան մակարդակը։

Արտադրանքի տեսակը	1932	1937	1950
Չուգուն (միլ. տոննն)	3,99	8,8	9,7
Պողպատ (միլ. տոննն)	3, 1	8,5	8,8
Քարածուխ (միլ. տոննն)	39, 2	69,0	86,1
Էլեկտրաէներգիա (միլիարդ կվժ)	3, 2	9,3	17,7
Շոգեքարշ (հատ)	431	880	1000

Գյուղատնտեսական մեքենաշինությունը 1952 թվականին 1940 թվականի համեմատությամբ աճեց, տրակտորներինը՝ 2,5 անգամ, սերմացտիչ մեքենաներինը՝ 7 անգամ և այլն։

Շնորհիվ էներգետիկ արդյունաբերության լայն զարգացման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, հատկապես հզոր ու մեծ տեմպերով աճող ծանր արդյունաբերությունը լիովին ապահովված է ռեսպուբլիկայի հարուստ ջրային ռեսուրսների, ածխարդյունաբերության մնացուկների, բնական ու արհեստական գազերի օգտագործման միջոցով ստեղծված էներգիայով։ Միայն էլեկտրական էներգիայի արտադրությունը նույն ժամանակում աճել է ավելի քան 37 անգամ։ Լենինի անվան Դնեպրի հիդրոէլեկտրակայանը Հայրենական Մեծ պատերազմից առաջ տարեկան արտադրում էր այնքան էլեկտրաէներգիա, որքան 1913 թվականին ցարական Ռուսաստանի բոլոր հիդրոէլեկտրակայանները միասին վերցրած։

Ներկայումս Սովետական Ուկրաինայում մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրանքը նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ աճել է 6,5 անգամ, իսկ արդյունաբերության մեջ աշխատող մեկ բանվորի էներգոզինվածությունն ավելացել է համարյա թե հինգ անգամ։

Ուկրաինայում գործող էլեկտրակայանների էլեկտրաօղակումը Ուկրաինան դարձրել է Եվրոպայի ամենախոշոր էլեկտրասիստեմ ունեցող պետությունը։

Հզոր էներգետիկ արդյունաբերության ստեղծումը, հանքային բազմատեսակ հարստությունների առկայությունն աճող արդյունաբերության ու գյուղատնտեսության հետ միասին, պայմաններ ստեղծեցին ռեսպուբլիկայում քիմիական արդյունաբերության լայն զարգացման համար։

Ծանր մեքենաշինության ու հզոր էներգետիկ բազայի ստեղծումը Ուկրաինայում արագացրեց արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը։ Դրա շնորհիվ ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր, փոխվեցին ու բարելավվեցին տեխնոլոգիական շատ պրոցեսներ, բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, արմատապես բարելավվեցին աշխատանքի պայմանները։

Այս բոլորը զգալիորեն փոխեցին ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքի մեջ արտադրության միջոցների ու սպառման միջոցների արտադրության փոխհարաբերությունը։

Այսպես, մինչև 1913 թվականը ուկրաինական արդյունաբերության թողարկած արտադրամիջոցների մեջ մեքենաշինությունը կազմում էր ընդամենը 6 տոկոս, իսկ 1940 թվականին, Հայրենական պատերազմի նախօրյակին, շնորհիվ մեքենաշինության արդյունաբերության լայն զարգացման, այն բարձրացավ մինչև 78 տոկոսի։ Տեղում արտադրվող, մասամբ և եղբայրական ռեսպուբլիկաներից, հատկապես ՌՍՖՍՌ-ից, ներմուծած սարքավորումների միջոցով, նախապատերազմյան շրջանում, ամբողջապես փոխվեցին ու կատարելագործված սարքավորումներով հարստացան ռեսպուբլիկայի արդյունաբերության հիմնական ֆոնդերը։

Այս բոլորի հետևանքով, ներկայումս հիմնովին փոխվել է նաև մետալուրգիական ու ծանր մեքենաշինության ձեռնարկությունների անցյալից ժառանգած անհամաչափ տեղաբաշխումը։

Հայտնի է, որ անցյալում մետալուրգիական ու մեքենաշինական գործարանները հիմնականում կենտրոնացված էին Դոնբասում, քարածխի արդյունա-

բերության շուրջը։ Այդ հետևանք էր այն բանի, որ մետալուրգիայի հին տեխնոլոգիայի դեպքում քարածխի ծախսը գերազանցում էր երկաթահանքի ծախսին։ Ներկայումս, տեխնոլոգիական նոր, ավելի կատարելագործված պրոցեսների կիրառման հետևանքով, երկաթահանքի ծախսն է գերազանցում քարածխի ծախսին, հետևաբար ձեռնտու է դառնում մետալուրգիական ձեռնարկության կառուցումը կողմնորոշել դեպի երկաթահանքի վայրը։ Միաժամանակ, քարածխի կոքսացումն էլ կատարելով մետալուրգիական ձեռնարկության մոտ, հնարավոր է դառնում կոքսացման բատերիներից ստացվող գազը ևս օգտագործել մետալուրգիայի տեխնոլոգիական պրոցեսներն ու ամբողջ ձեռնարկությունը գազոֆիկացման ենթարկելու համար։

Ծանր արդյունաբերության բնագավառում ձեռք բերված նվաճումների հիման վրա արագորեն աճել է նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը։

Արդյունաբերության բուռն ու բազմակողմանի զարգացումը, նրա տեխնիկական վերազինումն ավելացրեց բանվոր-ծառայողների թիվը և որակական մեծ փոփոխությունների ենթարկեց այն։ Բանվոր-ծառայողների թիվը 1940 թվականի համեմատությամբ ավելացավ 3,3 անգամ։

Բանվոր դասակարգի որակական ու քանակական աճը տնտեսության սոցիալիստական սիստեմի պայմաններում, արտադրության ռացիոնալացման ու արտադրանքի անընդհատ ավելացման գործում բանվորների ցուցաբերած անձնական շահագրգռվածությունն օրեցօր աշխատանքային նոր սխրագործություններ ծնեցին աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, նյութական ծախսումները կրճատելու բնագավառում։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության բուռն զարգացումը, նրա սոցիալիստական ինդուստրացումը հիմք հանդիսացան ու անհրաժեշտություն դարձրին մանր, ցիր ու ցան անհատական գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական, կոլեկտիվ տնտեսության ուղու վրա տեղափոխելու համար։

Նախապատերազմյան, հիմնականում առաջին ու երկրորդ հնգամյակների ընթացքում, Սովետական Ուկրաինայի ավելի քան 5 միլիոն մանր, աղքատ գյուղացիական, պրիմիտիվ տեխնիկայով տնտեսությունները համախմբվեցին կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Մինչև Հայրենական պատերազմը Ուկրաինայում կազմակերպված էր մոտ 28 հազար կոլտնտեսություն, ավելի քան 900 սովխոզ, 1347 մեքենատրակտորային ու մասնագիտացված կայան։

Ներկայումս ուկրաինական դաշտերում աշխատում են 182 հազար տրակտոր (15 ձիու ուժի հաշվով), որը 68 տոկոս ավելի է, քան 1940 թվականին, 51 հազար հացահատիկային կոմբայն, կամ 63 տոկոս ավելի, քան 1940 թվականին և մի քանի տասնյակ հազար գյուղատնտեսական բարդ ու պարզ մեքենաներ, սարքավորումներ և այլն։

Սովետական Ուկրաինայի գյուղատնտեսության մեջ աշխատող տրակտորային պարկն իր քանակով և հզորությամբ դեռևս 1940 թվականին գերազանցում էր Ֆրանսիայում, Գերմանիայում ու Բուալիայում գործող տրակտորային պարկի քանակն ու կարողությունը, իսկ կոմբայնի պարկը մի քանի անգամ գերազանցում էր ամբողջ Արևմտյան Եվրոպայի գործող կոմբայնի պարկին։

Մեծ աշխատանք է կատարվում գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման բնագավառում։ Ներկայումս Ուկրաինայում գործում են ավելի քան 4000 գյուղական էլեկտրակայան, որոնք տալիս են մոտ 9 անգամ ավելի էլեկտրաէներգիա, քան 1940 թվականին։

Սոցիալիստական գյուղատնտեսության բազմակողմանի մեքենայացման ու էլեկտրիֆիկացման, սովետական ագրոբիոլոգիական առաջավոր գիտության նվաճումների լայն կիրառման, կոլտնտեսականների ու գյուղատնտեսության մասնագետների նորարարական առաջավոր փորձի ընդհանրացման ու կիրառման միջոցով հետպատերազմյան տարիների ընթացքում զգալիորեն բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականությունը։ Ներկայումս Ուկրաինայի ամբողջ ցանքատարածությունը նախասովետական շրջանի համեմատությամբ ավելացել է մոտ 30 տոկոսով, իսկ բերքատվությունը՝ միայն հացահատիկների դծով վերջին տարիների ընթացքում, 1913 թ. համեմատությամբ, ավելացել է ավելի քան 60 տոկոսով։

Ցանքատարածությունների ավելացման, բերքատվության բարձրացման ու կոլտնտեսությունների արտադրա-կազմակերպական ամրապնդման հետևանքով Սովետական Ուկրաինայի կոլտնտեսությունները տարեցտարի ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ են վաճառում պետությանը և կոլտնտեսային ու կոոպերատիվ շուկաներում։

Ուկրաինայի կոլտնտեսություններն ու սովխոզները հետպատերազմյան տարիների ընթացքում զգալի աշխատանք կատարեցին սոցիալիստական անասնաբուծության զարգացման բնագավառում։ 1945 թվականից մինչև 1953 թվականը խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ռեսպուբլիկայում ավելացել է 4,7 միլիոն գլխով, ոչխարներինն ու այծերինը՝ 5,6 միլիոն գլխով, իսկ խոզերինը՝ 7,2 միլիոն գլխով։

Կոլտնտեսությունների արտադրա-կազմակերպական ամրապնդման, ցանքատարածությունների ընդարձակման, բերքատվության բարձրացման, անասունների գլխաքանակի ավելացման ու մթերատվության բարձրացման համար սոցիալիստական գյուղատնտեսության հազարավոր առաջավորներ պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով, մեդալներով, արժանացել Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչմանը։

Սակայն, պետք է ասել, որ ինչպես այդ մատնանշված է ՍՄԿՊ 1953 թվականի Սեպտեմբերյան պլենումի որոշումների մեջ, ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Ուկրաինայում գյուղատնտեսության նյութա-տեխնիկական հզոր բազայի վատ օգտագործման, սովետական ագրոբիոլոգիական գիտության նվաճումների անբավարար ներդրման և կոլտնտեսությունների աշխատանքներում թույլ տված շատ այլ թերությունների հետևանքով, գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները չեն ապահովում ինչպես սոցիալիստական արդյունաբերության, այնպես էլ բնակչության աճող պահանջները։

Սոցիալիստական արդյունաբերության, կոլտնտեսային գյուղատնտեսության բուռն զարգացման հետ միասին, տնտեսական մեծ անհրաժեշտություն դարձավ տրանսպորտային կապերի զարգացումն ու կատարելագործումը։ Այս բնագավառում ևս Ուկրաինական ռեսպուբլիկայում մեծ աշխատանք կատարվեց։ Ներկայումս Ուկրաինայում երկաթուղային ճանապարհների երկարությունը, 1913 թվականի համեմատությամբ, ավելացել է մոտ 36 տոկոսով։ Կառուցվել ու արդեն օգտագործվում են տնտեսական մեծ նշանակություն ունեցող այնպիսի խոշոր մագիստրալներ, ինչպիսիք են՝ Մոսկվա—Դոնբաս, Խարկով—Դնեպրոպետրովսկ—Խերսոն, որոնք ներկայումս մեծ դեր են կատարում թե՛ միջռեսպուբլիկական և թե՛ ներռեսպուբլիկական ռայոնական տնտեսական

կապերի զարգացման համար։ Ուկրաինան դեռևս 1941 թվականին երկաթուղային տրանսպորտի ճանապարհների խտությամբ Միութենական ռեսպուբլիկաների շարքում գրավում էր առաջին տեղը և կատարում ամբողջ տեղափոխությունների $^1/_3$ մասը։

Սովետական Ուկրաինայի տնտեսական զարգացման գործում, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս վճռական նշանակություն ունի նյութատեխնիկական այն մեծ օգնությունը, որ նա ստանում է Միութենական մյուս ռեսպուբլիկաներից։

Այսպես, օրինակ, Ուկրաինան ներկայումս Միութենական ռեսպուբլիկաներից ստանում է պղինձ, մոլիբդեն, ալունիտ, տուրբին, բազմատեսակ էլեկտրամոտորներ, զանազան տեսակի դազգահներ, շոգեքարշեր, վագոններ, ավտոմեքենաներ, թեթև արդյունաբերության մի քանի տեսակի հումքեր՝ բամբակ, մետաքս, բուրդ, կաշի և այլն։

Այսպիսով, Սովետական իշխանության տարիներին Ուկրաինայի քաղաքական-տնտեսական բուռն վերելքը հասցրեց այն բանին, որ Ուկրաինան դարձավ հզոր ինդուստրիալ ու լայն մեքենայացված խոշոր, սոցիալիստական գյուղատնտեսության ռեսպուբլիկա։

Ուկրաինական արդյունաբերության մեջ ներկայումս զգալի տեղ է գրավում և միութենական նշանակություն ունի մետալուրգիական, քարածխային, քիմիական, հիդրոէներգետիկ, սննդի՝ հատկապես շաքարի, ալրաղացային և բազմաթիվ այլ տեսակի արդյունաբերության ճյուղեր։ Գյուղատնտեսության գծով Ուկրաինայում մեծ չափով արտադրվում է հացահատիկ՝ գլխավորապես բարձրորակ ցորեն, շաքարի ճակնդեղ, վուշ, կանեփ, ծխախոտ, կարտոֆիլ, մի քանի տեսակի յուղատուներ, մեծ քանակությամբ անասնամթերք և այլն։

Սովետական Ուկրաինան, շնորհիվ իր ձեռք բերած վիթխարի հաջողությունների, հասավ այն բանին, որ մինչև Հայրենական Մեծ պատերազմը կարողացավ տալ Սովետական Միության ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մոտ 20 տոկոսը, որից էլեկտրաէներգիայի գծով՝ 24,9 տոկոսը, ածխարդյունաբերության գծով՝ 50,5 տոկոսը, երթահանքի՝ 63 տոկոսը, չուգունի ձուլվածքի՝ 61,2 տոկոսը, պողպատի՝ 47,1 տոկոսը, պրոկատի՝ 47,7 տոկոսը, գյուղատնտեսական գործիքների՝ 46,8 տոկոսը, շաքարի արտադրանքի՝ 70,5 տոկոսը և այլն։

Ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր էտապներում, սկսած նրա վերականգնման շրջանից մինչև սոցիալիզմի հաղթանակը, տնտեսական, կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում աշխատանքն ընթանում էր դասակարգային պայքարի սուր արտահայտություն ստացած պայմաններում։

Սակայն, ուկրաինական ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, առաջնորդվելով Լենինի ցուցումներով, ոգևորված ապագայի պայծառ հեռանկարներով, կարողացավ լիովին հաղթահարել տնտեսական ու դասակարգային պայքարի դժվարությունները, ավարտել սոցիալիզմի հաղթանակն ու հաստատորեն գնալ դեպի կոմունիզմ։

Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ջանքերով, Սովետական Ուկրաինայում արդյունաբերության, գյուղատնտեսության ու տրանս-

պորտի բուռն վերելքի հիման վրա բարելավվեց բնակչության նյութական բարեկեցությունն ու բարձրացավ նրանց կուլտուրական մակարդակը։

Սովետական հասարակության նյութական կենցաղային դրության սիստեմատիկ բարելավման ու կուլտուրական մակարդակի բարձրացման կարևորագույն ցուցանիշը պետական բյուջեի աճն է։ Ուկրաինական ՍՍՌ պետական բյուջեն ներկայումս, 1940 թվականի համեմատությամբ, աճել է երկու անգամ և կազմում է 17,9 միլիարդ ռուբլի, որի մոտ երկու երրորդ մասը հատկացվում է բնակչության կուլտուր-կենցաղային կարիքների բարելավմանը։ Ժողովրդական կրթության համար կատարվող հատկացումները 1953 թվականին՝ 1945 թվականի համեմատությամբ ավելացել են 2,5 անգամ, առողջապահության ֆինանսավորման գծով կատարվող հատկացումները՝ 2,6 անգամ, իսկ սոցիալական ապահովագրման գծով՝ մոտ 3 անգամ։

Գերմանա-ֆաշիստական բարբարոսների կողմից կատարված ահռելի կործանումներից ու ավերումներից հետո, շնորհիվ Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ամենօրյա հոգատարության, օրեցօր բարելավվում է բնակչության կոմունալ-բնակարանային դրությունը։ Անցած 1953 թվականի համեմատությամբ բնակարանային շինարարության համար հատկացվող գումարը 1954 թվականին ավելացել է 24 տոկոսով։ Հետպատերազմյան տարիներին ուկրաինական քաղաքներում ու բանվորական ավաններում վերակառուցվել ու նոր կառուցվել է մոտ 10 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն, գյուղերում՝ մոտ 300 հազար բնակելի շենք։

Սովետական Ուկրաինայում 1953 թվականի ընթացքում բնակչության կուլտուր-կենցաղային պայմաններն է՛լ ավելի բարձրացնելու համար, 20 միլիարդ ռուբլի ավելի է ծախսվել, քան նախատեսված էր բյուջեով։ Միայն բնակարանային շինարարության վրա վերջին տարիների ընթացքում ծախսվել է ավելի քան 930 միլիոն ռուբլի և բանվոր-ծառայողներին հատկացվել է մոտ 600 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։

1954 թվականի ընթացքում նախատեսվում է քաղաքային բնակարանային շինարարության վրա ծախսել մոտ 300 միլիոն ռուբլի։

Մանրածախ գների սիստեմատիկ իջեցումը, գյուղատնտեսական հարկի դրույքների իջեցումը, գյուղատնտեսական մի շարք մթերքների պետական մթերման ու գնման գների բարձրացումը տասնյակ միլիարդ ռուբլու խնայում ու եկամուտ բերեցին ուկրաինական ժողովրդին։ Միայն 1953 թվականի ընթացքում մանրածախ գների իջեցման միջոցով Ուկրաինայի բնակչությունը շահել է մոտ 8 միլիարդ ռուբլի։

Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ տնտեսական ու կուլտուրական սերտ կապերի ստեղծման, ռուս մեծ ժողովրդի օգնության, նրա առաջավոր գիտության ու կուլտուրայի բարերար ազդեցության շնորհիվ Ուկրաինայում բուռն կերպով զարգացավ սովետական գիտությունը, գրականությունն ու արվեստը։

Սովետական իշխանության տարիներին Ուկրաինայում մեծ չափերով աճեց ժողովրդական կրթության գործը։ Ներկայումս Ուկրաինայում կա ավելի քան 30 հազար դպրոց, որտեղ սովորում է մոտ 6,5 միլիոն աշակերտ, այսինքն՝ երկու անգամ ավելի, քան Նորվեգիայի ամբողջ բնակչությունը։ Ուկրաինայում 7-ամյա ընդհանուր պարտադիր ուսուցում կիրառելու հետևանքով, դպրոցական հասակի բոլոր երեխաները թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, լիովին ընդգրկվել

են դպրոցներում, այն դեպքում, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում դպրոցական հասակ ունեցող 5 երեխաներից միայն 1—2-ին է հաջողվում դրպրոց ընդունվել ու սովորել։

Սովետական Ուկրաինայում լայն ծավալ է ստանում բարձրագույն կրթությունը։ Նախասովետական Ուկրաինայում կար ընդամենը 19 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 26,7 հազար ուսանողներով։ Ներկայումս Սովետական Ուկրաինան ունի 150 բարձրագույն ուսումնական հաստատություն, մոտ 550 մասնագիտացված տեխնիկում, որտեղ սովորում են հարյուր հազարավոր ուսանողներ։ Ուկրաինական բարձրագույն ուսումնական հաստատություններն ու տեխնիկումները 1953 թվականին ժողովրդական տնտեսությանը, գիտությանն ու կուլտուրային տվել են 76 հազար մասնագետներ, այսինքն՝ մոտ 3 անգամ ավելի, քան նախասովետական Ուկրաինայի ,ուսանողության ընդհանուր թիվն էր։

Սովետական Ուկրաինայում օրեցօր ծաղկում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական արվեստը։ Ներկայումս Ուկրաինայի քաղաքներում, բանվորական ավաններում ու շրջանային կենտրոններում կա 74 թատրոն, 65 ստեղծագործական կոլեկտիվ, 28 հազար կուլտուրայի տուն-ակումբ, 84 թանգարան, մոտ 30 հազար մասսայական գրադարան, հրատարակվում են ավելի քան 1150 անուն թերթեր ու ամսագրեր՝ միլիոնավոր տիրաժներով։ Ուկրաինական արվեստագետները ստեղծագործական մեծ եռանդով նորանոր արժեքավոր գործեր են ստեղծում, որոնք բարձր են գնահատվում Սովետական Միության բոլոր ժողովուրդների կողմից։

Ժողովրդական տնտեսության, կուլտուրայի ու արվեստի հետ միասին ծաղկում ու ծավալվում է նաև գիտությունը։

Սովետական Ուկրաինայի Գիտությունների ակադեմիան, որը Միութենական ռեսպուբլիկաների ակադեմիաների շարքում աչքի ընկնող տեղ է գրավում, իր մեջ միավորում է 30 խոշոր գիտա-հետազոտական ինստիտուտ։ Ներկայումս Ուկրաինայում ընդամենը գործում են մոտ 490 գիտական հիմնարկներ՝ ինստիտուտներ, լաբորատորիաներ, փորձակայաններ ու փորձադաշտեր։

Սովետական իշխանության տարիներին ուկրաինական գիտնականները լայնորեն օգտագործելով ռուսական ու սովետական մյուս բոլոր ժողովուրդների գիտության լավագույն նվաճումները, բարձր աստիճանի հասցրին գիտությունն ու այն ամբողջապես ի սպաս դրին ժողովրդական տնտեսության զարգացման, սովետական հասարակության նյութական, կուլտուրական կյանքի բարելավման ու երկրի պաշտպանության ամրապնդման գործին։

Սովետական իշխանության տարիներին, սովետական ժողովուրդների, առանձնապես ռուս մեծ ժողովրդի օգնությամբ իրականացավ ուկրաինական ժողովրդի դարավոր իղձը՝ ուկրաինական հողերը միավորելու մասին։

1939 թվականին Սովետական Ուկրաինային վերամիավորվեցին Արևմտյան Ուկրաինայի պատմական հողերը, 1940 թվականին՝ Հյուսիսային Բուկովինան և Իզմայիլի մարզը, իսկ 1945 թվականին՝ Անդրկարպատյան Ուկրաինան։

Այլևս չկա երկու Ուկրաինա, կա մեկ միասնական Սովետական Ուկրաինա։

Ուկրաինական պատմական հողերի վերամիավորումը քաղաքական, տնտեսական ու կուլտուրական մեծ նշանակություն ունեցավ նոր վերամիավորված մարզերի հետագա զարգացման համար։ Վերամիավորված մարզերի աշխա-

տավոր ժողովուրդն իր ժամանակին ազատագրվեց լեհական ու ռումինական կալվածատերերի, կապիտալիստների բուրժուա-նացիոնալիստական ճնշումից, գաղութային իրավազուրկ կախվածությունից։

Սովետական Ուկրաինայի տնտեսական և կուլտուրական կյանքն այսօր անհամեմատ ավելի բարձր կլիներ, եթե ուկրաինական ժողովրդի ջանքերի մեծ մասը չներդրվեր գերմանա-ֆաշիստական զավթիչների ավերումների հետևանքների վերացմանը, ավերված ֆաբրիկաների, գործարանների, կոլտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների, քաղաքների ու գյուղերի վերականգնմանը։

Սակայն, նշանակալի է այն փաստը, որ գերմանա-ֆաշիստական օկուպանտների կողմից Սովետական Ուկրաինային հասցրած խոր ու մեծ վերքերը, շնորհիվ սոցիալիստական տնտեսաձևի, շնորհիվ Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական օգնության, արագորեն բուժվեցին և Ուկրաինական ռեսպուբլիկան գրավեց իր արժանավոր տեղը, որպես հզոր ինդուստրիալ, գյուղատնտեսական մթերքներով հարուստ ռեսպուբլիկա։

Նոր հաջողություններ ձեռք բերեց ուկրաինական ժողովրդական տնտեսությունը 1953 թվականի ընթացքում։

Արդյունաբերության համախառն արտադրանքի տարեկան պլանը կատարվեց 101,5 տոկոսով, որը 1952 թվականի համեմատությամբ ավելի է 13 տոկոսով, իսկ 1950 թվականի համեմատությամբ՝ 50 տոկոսով։

Արդյունաբերական արտադրանքի առանձին տեսակները 1952 թվականի համեմատությամբ աճել են՝ չուգունինը՝ 6 տոկոսով, պողպատինը՝ 16 տոկոսով, պրոկատինը՝ 10 տոկոսով, կոքսինը՝ 10 տոկոսով, երկաթահանքի հանույթը՝ 17 տոկոսով, մարգանեցինը՝ 11 տոկոսով, ալյումինինը՝ 15 տոկոսով, ցինկինը՝ 17 տոկոսով, նավթինը՝ 18 տոկոսով և այլն։ Շոգետուրբինների թողարկումն ավելացավ 11, լոկոմոտիվներինը՝ 15, հզոր շոգեքարշերինը՝ 17,4, տրակտորներինը՝ 9, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 14 տոկոսով։

1953 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում զգալի չափերով ավելացավ ժողովրդական սպառման իրերի արտադրությունը։

1952 թվականի երկրորդ կիսամյակի համեմատությամբ բամբակի գործվածքների արտադրանքն ավելացել է 31 տոկոսով, բրդին և կիսաբրդինը՝ 12 տոկոսով, կաշվե կոշիկինը՝ 18, ռետինե կոշիկինը՝ 43 տոկոսով, ռադիո ընդունիչներինը՝ 2,6 անգամ։

Մեծ նվաճումներ ունեցավ նաև սոցիալիստական դյուղատնտեսությունը։

Ցանքային տարածությունները, հատկապես հացահատիկային կուլտուրաների գծով 1953 թվականին, 1952 թվականի համեմատությամբ, ավելացավ 745 հազար հեկտարով։ Ընդարձակվում է նաև շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, արևածաղկի, վուշի ու կերային կուլտուրաների ցանքատարածությունը։

Սովետական Ուկրաինայի սոցիալիստական դյուղատնտեսությունը 1953 թվականի ընթացքում ստացավ ավելի քան 15 հազար տրակտոր, 7 հազար կոմբայն, մոտ 25 հազար տրակտորային դութան։

1953 թվականի ընթացքում զգալիորեն ավելացավ նաև անասունների գլխաքանակը։ 1952 թվականի համեմատությամբ կովերի գլխաքանակն աճել է 17 տոկոսով, ոչխարներինը՝ 15 տոկոսով, իսկ խոզերինը՝ 14 տոկոսով։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XIX համագումարի ու ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թվականի Սեպտեմբերյան ու 1954 թվականի մարտի

պլենումների որոշումների կենսագործումով տնտեսական ու կուլտուրական շինարարության նոր ու ավելի պայծառ հեռանկարներ են բացվում ուկրաինական ժողովրդի համար։

Մոտակա տարիների (1954—1956) ընթացքում, ժողովրդական լայն սպառման սպրանքների ու մթերքների արտադրությունը նախատեսվում է ավելացնել 2—3 անգամ։

Գործող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրողականությունը բարձրացնելու հետ միասին, կառուցվելու են մի շարք նոր ձեռնարկություններ, որոնք մեծ չափերով կավելացնեն ժողովրդական սպառման իրերի ու մթերքների արտադրությունը։

Կառուցվում է բամբակի գործվածքների Խերսոնի մեծ կոմբինատը, որը տարեկան պետք է տա ավելի քան 100 միլիոն մետր գործվածքներ՝ սկսված է Չերնիգովի նուրբ մահուդի կոմբինատի կառուցումը, որը տարեկան թողարկելու է 12,5 միլիոն մետր բարձրորակ գործվածք։ Լայնորեն զարգանալու է սննդի արդյունաբերությունը. այսպես, օրինակ, Սովետական Միությունում նոր կառուցվելիք շաքարի 24 գործարաններից 16-ը կառուցվելու են Ուկրաինայում։ Մեծ ծավալով ավելանալու է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, հատկապես ցորենի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, անասնամթերքների և այլն։

Ուկրաինական ժողովուրդը մեծագույն խանդավառությամբ ընդունեց Ղրիմի մարզը ՌՍՖՍՌ կազմից հանելու և ՈՒՍՍՌ կազմի մեջ մտցնելու վերաբերյալ որոշումը։

Ռուս մեծ ժողովուրդը մեծահոգաբար իր եղբայրական ուկրաինական ժողովրդին հանձնեց իր լավագույն մարզերից մեկը։

Միայն սոցիալիզմի հաղթանակած երկրում, միայն լենինյան ազգային քաղաքականության իրագործման պայմաններում կարող է տեղի ունենալ պատմա-քաղաքական ու տնտեսական մեծագույն նշանակություն ունեցող այդպիսի ակտ։

Ուկրաինան, իր բազմամյա պատմության ընթացքում երբեք փառքի ու հզորության այնպիսի բարձր աստիճանի չէր հասել, ինչպես նա հասավ Սովետական իշխանության տարիներին։ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմում ՌՍՖՍՌ-ից հետո նա ամենահզոր ռեսպուբլիկան է։

Սովետական Ուկրաինայի տնտեսական ու կուլտուրական ծաղկումը Սովետական Միության Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման, սովետական սոցիալիստական ազգերի համերաշխության, եղբայրական անշահախնդիր օգնության արդյունքն է։

Լենինիզմի անպարտելի դրոշի ներքո, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, հերոսական ուկրաինական ժողովուրդը, սոցիալիստական աշխատանքի միջոցով, տնտեսական ու կուլտուրական նոր բարձունքներ կնվաճի հասարակության նյութական ու կուլտուրական կյանքում և կապահովի սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցումը։